

## ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

09.12.2014

Դեկտեմբերի 9-ին Գեղարքունիքի մարզպետարանում, մարզպետի տեղակալ Անդրանիկ Հակոբյանը կատարեց քաղաքացիների ընդունելություն: Տարբեր հարցերով դիմում ներկայացնողների թիվը՝ 21-ն էր: Կենցաղային խնդիրների կարգավորման նպատակով դրամական աջակցություն ակնկալող դիմումատուները 17-ն էին: 1 քաղաքացի դիմեց պետպատվերի շրջանակներում բուժումը կազմակերպելու, 1 քաղաքացի՝ աշխատանքի տեղավորման, 1 քաղաքացի՝ ընտանեկան նպաստի համակարգում ընդգրկվելու և 1 քաղաքացի՝ սեփականության իրավունքի վերականգնման խնդրանքով: Վերջին երեք դիմումներում ներառված խնդիրների վերաբերյալ Անդրանիկ Հակոբյանը տվեց համապատասխան ցուցումներ և հանձնարարականներ, իսկ մնացած 17 դիմումներին պատասխան կտրվի օրենքով սահմանված ժամկետում: